ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԹՈՒՐ ԱԲՐԱՀԱՄԻՆ

Մայիսի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց բռնցքամարտի IBF վարկածով միջին քաշային կարգում աշխարհի չեմպիոն Արթուր Աբրահամին:

Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց, որ աշխարհահռչակ մարզիկը Մայր Աթոռ է այցելում վերջերս տարած հաղթանակից հետո: Նորին Սրբությունն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց հայազգի բռնցքամարտիկին՝ նրա ցուցաբերած արիության, ամուր կամքի և հաղթանակի ձգտման վճռականության համար:

«*Դուք բարձր եք պահում մեր ժողովրդի անունը և նպաստում նաև մեր երկրի բարի վարկին*»,- ասաց Վեհափառն իր խոսքում՝ մաղթելով, որ Տիրոջ Աջը միշտ հովանի լինի բռնցքամարտիկի վրա՝ արձանագրելու նորանոր հաղթանակներ:

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Մայիսի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Լեհաստանի Ներքին գործերի նախարար Յանուշ Կաչմարեկին՝ ՀՀ ոստիկանապետ Հայկ Հարությունյանի և երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

Ողջունելով բարձրաստիճան հյուրի այցը Մայր Աթոռ՝ Նորին Սրբությունը գնահատանքով հաստատեց, որ երկու երկրների միջև հարաբերությունները և համագործակցությունը տարեցտարի սերտանում է և նորանոր հաջողություններ արձանագրում՝ ընդգրկելով մեր կյանքի տարբեր ոլորտներ: Վեհափառ Հայրապետը մասնավորաբար նաև գոհունակություն հայտնեց Լեհաստանում հայ համայնքի հանդեպ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար:

«*Լեհ ժողովրդի հավատքը մեծապես տպավորել է մեզ*»,- նշեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ անդրադառնալով միջեկեղեցական համագործակցությանը Հայ Առաքելական ու Հռոմեականաթոլիկ Եկեղեցիների միջև: Նորին սրբությունը նաև իր ողջույնները փոխանցեց կարդինալ Գլեմպին:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր բարեմաղթանքներն ուղղեց Լեհաստանի Ներքին գործերի նախարարին և ՀՀ ոստիկանապետին՝ ցանկանալով արդյունաշատ համագործակցություն, բարի ծրագրերի և համատեղ ձեռնարկների հաջող իրականացում:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ